

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 29 » հոկտեմբերի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

**«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. ՆԱԽԱԲԱՆ

Սույն ընթացակարգը նպատակաուղղված է հանրակրթության երրորդ աստիճանում՝
ավագ դպրոցում կրթության որակի և արդյունավետության բարձրացմանն ու
արդիականացմանը:

Ընթացակարգի ընդունումը կարևոր է, այնքանով, որքանով ավագ դպրոցը
հանդիսանում է «նախամասնագիտական» կրթությունն ապահովող հիմնական օղակը, որի
գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ
կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը:

Ընթացակարգը նկարագրում է ԳՊՄԻ ավագ դպրոցի համակարգը և դրա որակի
բարձրացմանն ուղղված ռազմավարությունը:

Սույն փաստաթղթի իրավական հիմքերն են՝

1. Հայաստանի Հանրապետության օրենքը հանրակրթության մասին:
2. Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագիրը: Հավելված 1
ՀՀ կառավարության 2008 թվականի որոշման:
3. «Հայաստանի հանրապետության պետական հանրակրթական ուսումնական
հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի
կանոնադրություն: Հավելված ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N
954 - Ն որոշման «Հավելված N 3»:
4. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ (ՀՀ կառավարության 17.06.2004թ. հ. 900-
Ն որոշում)
5. ԳՊՄԻ ավագ դպրոցի կանոնադրություն

2 ԳՊՄԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

- 2.1 Դպրոցի ապահովումը որակյալ մանկավարժական կադրերով: Ուսուցիչների պարբերաբար վերապատրաստում ԳՊՄԻ մասնագիտական ամբիոններում՝ բուհի կողմից սահմանված ընթացակարգով:
- 2.2 Ավագ դպրոցի նյութատեխնիկական հնարավորությունների անընդհատ բարելավումը, ժամանակակից գրադարանի համալրումը անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով և հարուստ գրադարանային ֆոնդով: Դպրոցի ապահովումը ուսումնական նյութերով և սարքավորումներով հազեցած համապատասխան լաբորատորիաներով:
- 2.3 Մովորողների հակումներին ու նախասիրություններին համապատասխան հոսքային ուսուցման կազմակերպումը և նրանց արդյունավետ նախապատրաստումը մասնագիտական կրթություն ստանալուն:
- 2.4 Ավագ դպրոցի տարբեր հոսքային ուսուցումների համար նախատեսված ուսումնամեթոդական համալիրների ստեղծումը:
- 2.5 Համապատասխան ամբիոնների կողմից աշակերտների գիտելիքների տարեվերջյան ստուգումների իրականացումը:
- 2.6 Գերազանցությամբ սովորող աշակերտներին խրախուսական կրթաթոշակի հատկացումը:

3.ԳՊՄԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ

- 3.1 Դասալսումներ համապատասխան ամբիոնի աշխատակիցների կողմից, ինչպես նաև դասադպրոցեսի անցկացում ամբիոնների առաջատար և հեղինակավոր դասախոսների կողմից յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:
- 3.2 Հետազայում բուհական ուսումնառությունը ԳՊՄԻ-ում շարունակելու ցանկություն դրսևորած աշակերտների հետ պայմանագրերի կնքում և 11-12-րդ դասարաններում անվճար պարապմունքների կազմակերպում:
- 3.3 Ծրագրային թեմատիկային համապատասխան՝ այցելություններ թանգարաններ, տուն- թանգարաններ, պատկերասրահներ:

4. ԳՊՄԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ

- 4.1 Ավագ դպրոցի գործունեության լուսաբանումը ԳՊՄԻ լրատվության միջոցներով և դպրոցի մասին տեսասկավառակների, բուկլետների ստեղծում ու տրամադրում հիմնական դպրոցներին:

- 4.2 Գիտության, մշակույթի և հասարակական գործիչների հետ աշակերտների հանդիպումների կազմակերպում:
- 4.3 Ինտելեկտուալ խաղերի կազմակերպում:
- 4.4 Ավագ դպրոցի մասնագետների կողմից պարբերաբար դասերի անցկացում հիմնական դպրոցներում:
- 4.5 Հեռանկարում դպրոցի լոգոն՝ տարբերանշանը կրող տրանսպորտային փոխադրամիջոցի ձեռքբերում:
- 4.6 Աշակերտների ամառային հանգստի կազմակերպում ճամբարում:
- 4.7 Դպրոցի ներսում թատերական, սպորտային, երաժշտական և այլ խմբակների ձևավորում, որոնք կոչված են նպաստելու երեխաների բազմակողմանի զարգացմանը:
- 4.8 Գերազանց սովորող և ակտիվ նախաձեռնող աշակերտներին ԳՊՄԻ ուսխորհրդի աշխատանքների մեջ ներգրավում, որը հնարավորություն կստեղծի ապագայում ավելի հեշտ ինտեգրվել բուհի ներքին կյանքին: